Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 27-ի N 1712 - Լ որոշման

ՊԻԼՈՏԱՅԻՆ ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

1. Սույնով կարգավորվում են պետական կառավարման համակարգի առանձին մարմինների (այսուհետ՝ կառավարման մարմիններ) կատարողականի գնահատման և դրա հիման վրա մարմիններին խրախուսման ֆոնդի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով ղեկավար պաշտոն զբաղեցնողներ են համարվում Կառավարության անդամները, կառավարման մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, Կառավարության անդամների, կառավարման մարմինների ղեկավարներին անմիջական ենթակա հանրային այլ պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև վերոնշյալ մարմինների կենտրոնական ապարատի կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ներքին կառուցվածքային միավորների ղեկավարները և նրանց տեղակալները՝ բացառությամբ տարածքային ստորաբաժանումների և այն դեպքերի, երբ տվյալ մարմինների համար հասանելի են ատեստավորման կամ կատարողականի գնահատման առանձին կարգավորումների հիմքով գործող լրացուցիչ հավելումների կամ հավելավճարների համակարգեր:

3. Սույն կարգում նկարագրված գործընթացի նպատակը Կառավարության ծրագրով և ռազմավարություններով սահմանված խնդիրների արդյունավետ լուծումն է՝ հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված առաջնահերթությունների ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների և (կամ) միջոցառումների կատարողականի գնահատման միջոցով:

4. Սույն գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) հաշվետու ժամանակահատվածի համար սահմանվում են կառավարման մարմինների գործունեության առաջնահերթություններ և դրանց կատարողականի արդյունքային ցուցանիշներ.

2) հաշվետու ժամանակահատվածի ավարտին իրականացվում է կատարողականի գնահատում՝ սահմանված առաջնահերթությունների համար որոշված արդյունքային ցուցանիշների նկատմամբ.

3) առաջնահերթությունների ուղղությամբ գրանցված բարձր կատարողականը խրախուսվում է սույն կարգին համապատասխան որոշված պարգևատրմամբ:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի առաջնահերթությունները և դրանց կատարողականի գնահատման արդյունքային ցուցանիշներն առաջարկում են կառավարման մարմինների ղեկավարները՝ Վարչապետի հանձնարարականներով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացված առաջնահերթությունները քննարկվում և համաձայնեցվում են փոխվարչապետերի հետ և ներկայացվում են Վարչապետին:

6. Կառավարման մարմինների ղեկավարները Վարչապետի հանձնարարականներով սահմանված պահանջներին համապատասխան Վարչապետի աշխատակազմ են ներկայացնում գործունեության առաջնահերթությունների և դրանց համար որոշված արդյունքային ցուցանիշների ուղղությամբ առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն, որը ներառում է սույն կարգի 7-րդ կետով սահմանված մեթոդաբանությամբ տրված գնահատականը:

7. Կառավարման մարմինների կողմից առաջնահերթությունների ուղղությամբ կատարողականի գնահատումն իրականացվում է հետևյալ մեթոդաբանությամբ՝

1) «Ամբողջությամբ կատարված է»՝ եթե գրանցված առաջընթացը նույնությամբ և ամբողջապես համապատասխանում է սահմանված արդյունքային ցուցանիշին.

2) «Հիմնականում կատարված է»՝ եթե բովանդակային աշխատանքն ամբողջությամբ ավարտված է և «ամբողջությամբ կատարված» համարվելու համար պակասում են միայն ընթացակարգային որոշ աշխատանքներ, կամ ապահովված է սահմանված քանակական ցուցանիշների առնվազն 90%-ը.

3) «**Մասամբ կատարված է»՝** եթե բովանդակային աշխատանքն ամփոփման փուլում է կամ ապահովված է սահմանված քանակական ցուցանիշների առնվազն 80%-ը.

4) «Ընթացքում է»՝ եթե բովանդակային աշխատանքի հիմնական մասը պատրաստ է, սակայն բովանդակության շուրջ աշխատանքները դեռևս շարունակվում են, կամ ապահովված է սահմանված քանակական ցուցանիշների առնվազն 50%-ը.

5) «Մեկնարկած է»՝ եթե նկարագրված բովանդակային աշխատանքը սկսվել է, սակայն դրա հիմնական մասը դեռևս ընթացքի մեջ է, կամ ապահովված է սահմանված քանակական ցուցանիշների 50%-ից պակասը:

8. Կառավարման մարմինների առաջնահերթությունների կատարողականի գնահատման արդյունքները քննարկվում են փոխվարչապետերի և համապատասխան մարմինների ղեկավարների միջև: Գնահատականները կարող են ճշգրտվել Վարչապետի և փոխվարչապետերի կողմից՝ ելնելով սահմանված առաջնահերթություններից և դրանց կատարման առանձնահատկություններից: Կատարողականի գնահատման՝ վերջնականացված արդյունքներն արձանագրվում և ներկայացվում են Վարչապետին:

9. Կառավարման մարմինների, վերջիններիս կանոնադրությամբ նախատեսված կամ համակարգման ներքո գտնվող մյուս մարմինների և միավորների կատարողականի ընդհանուր գնահատականը ձևավորվում է տվյալ մարմնի համար սահմանված առաջնահերթությունների համար հաշվարկված գնահատականների թվաբանական միջինից, ընդ որում, յուրաքանչյուր առաջնահերթության գնահատականը ևս ձևավորվում է դրա առանձին գործողությունների կատարման գնահատականի թվաբանական միջինից՝ հետևյալ սանդղակին համապատասխան՝

Որակական գնահատական	**Քանակական գնահատական**
Ամբողջությամբ կատարված է	5
Հիմնականում կատարված է	4
Մասամբ կատարված է	2
Ընթացքում է	1
Մեկնարկած է	0

10. Կառավարման մարմինների գնահատման ցուցանիշը որոշվում է՝ ելնելով կատարողականի գնահատման արդյունքում ստացված միավորի և հնարավոր առավելագույնի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսով:

11. Վարչապետի աշխատակազմի, փոխվարչապետերի գրասենյակների գնահատականը որոշվում է կառավարման մարմինների կատարողականի ընդհանուր գնահատականների թվաբանական միջինով:

12. Ղեկավար պաշտոններից յուրաքանչյուրի պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ պարգևավճարների հաշվարկման գործակիցները սահմանվում են կառավարման մարմիններին գումար հատկացնելու վերաբերյալ Կառավարության որոշումներով, որոնցով խրախուսման ֆոնդ կարող է հատկացվել նաև այլ մարմինների համար:

13. Կառավարման մարմինների կանոնադրությամբ նախատեսված կամ համակարգման ներքո գտնվող մարմինների համար խրախուսում նախատեսելու դեպքում կիրառվում են սույն կարգի 2-րդ, 9-րդ և 15-րդ կետերով նախատեսված կարգավորումները:

14. Կառավարման մարմնի խրախուսման ֆոնդի մեծությունը որոշվում է հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ փաստացի զբաղեցված ղեկավար պաշտոնների քանակի և պաշտոնների յուրաքանչյուր խմբի համար պաշտոնային դրույքաչափերի (տվյալ խմբի համար նախատեսված նվազագույն) հիման վրա, որոնց վերաբերյալ տվյալները Ֆինանսների նախարարություն են ներկայացվում կառավարման մարմինները:

15. Կառավարման մարմնի խրախուսման ֆոնդը հաշվարկվում է հաշվետու ժամանակահատվածի բոլոր ամիսների համար սույն կարգի իմաստով ղեկավար պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերի, դրանցից յուրաքանչյուրի համար պարգևավճարի հաշվարկման գործակցի և հաշվետու ժամանակահատվածում կառավարման մարմնի գնահատման ցուցանիշի արտադրյալով՝ հետևյալ բանաձևով՝

$$\text{ԽՍՖ} = \sum_{n=1}^{N} \text{Ք}_n \times \text{ՊԴn} \times \text{ՊԳ}_n \times \text{Ա}_n \times \text{ԳՑ}_n$$

Որտեղ՝

- **ԽՍՖ-ն՝** խրախուսման ֆոնդն է,
- **Ք$_n$-ն՝** յուրաքանչյուր պաշտոնային խմբում աշխատողների քանակն է,
- **ՊԴ-ն՝** յուրաքանչյուր խմբի համար սահմանված նվազագույն պաշտոնային դրույքաչափն է,
- **ՊԳ-ն՝** յուրաքանչյուր պաշտոնային դրույքաչափի նկատմամբ պարգևավճարի հաշվարկման գործակիցն է,
- **Ա-ն՝** հաշվետու ժամանակահատվածում ամիսների քանակն է,
- **ԳՑ-ն՝** հաշվետու ժամանակահատվածում կառավարման մարմնի գնահատման ցուցանիշն է,
- **N-ը՝** պաշտոնների յուրաքանչյուր խմբի քանակը:

16. Սույն կարգով որոշվող խրախուսման ֆոնդից պարգևատրման բաշխումն իրականացվում է համապատասխան պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով, ընդ որում, տվյալ մարմնի խրախուսման ֆոնդից պարգևատրման մինչև 20 տոկոսը կարող է բաշխվել սույն կարգի իմաստով ղեկավար պաշտոն չզբաղեցնող անձնակազմի միջև: Հաշվետու ժամանակահատվածի կատարողականի գնահատման արդյունքներով պարգևատրումն իրականացվում է միանվագ վճարման եղանակով:

17. Խրախուսանքի արժանացած անձին տրված պարգեւավճարի 10 տոկոսը, իսկ վերջինիս մեծությունը 250 հազար դրամը գերազանցելու դեպքում՝ 250 հազար դրամը, նախատեսված է վճարման կիսամյակին հաջորդող կիսամյակի ընթացքում կրթության կամ գիտական գործունեության հետ կապված, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հրապարակումների (այսուհետ՝

կրթության) նպատակով ծախսերի համար: Կրթության նպատակով ստացված միջոց-ների գծով ծախսերը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու դեպքում այդ մասը ենթակա է նվազեցման հաջորդող ժամանակահատվածի խրախուսման ֆոնդից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ